ՊԱՅՄԱՆԱԳԻՐ UL 021

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ԱՄՄՔ-ՄԱ-ԾՁԲ-18/9

ք. Մասիս

«23» հունվարի 2018թ.

Մասիսի քաղաքապետարանը, ի դեմս Դ. Համբարձումյանի, որը գործում է քաղաքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԿԻՄ-ՌԱՅ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Է. Ստեփանյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

Կատարողը մատուցում է Մասիսի քաղաքապետարանի կարիքների համար տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայություններ:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Կատարողը պարտավորվում է.

2.1.1. ապահովել տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայություններ,

2.1.2. կատարել ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ գրանցումները պայմանագրի գործողության ողջ ժամկետում,

2.1.3. իրականացնել տրամադրվող կապի շուրջօրյա վերահսկում և կառավարում, հնարավորության դեպքում նախապես տեղեկացնել Բաժանորդին պրոֆիլակտիկ աշխատանքների կամ այլ փոփոխությունների մասին, որոնք կարող են ժամանակավորապես ընդհատել ծառայությունների մատուցումը,

2.1.4. անհրաժեշտության դեպքում իրականացնել կապը ապահովող սարքավորումների տեղադրման և կարգավորման աշխատանքներ,

2.1.5. Բաժանորդին հնարավորություն ընձեռնել Կատարողի էլեկտրոնային կայքից տեղեկանալ իր տրաֆիկի ծավալների վերաբերյալ, որի համար Բաժանորդին կհատկացվի համապատասխան մուտքային անուն և ծածկագիր:

2.2. Բաժանորդը պարտավորվում է.

2.2.1. հետևել իր օգտագործած տրաֆիկի ծավալներին, ժամանակին վավերացնել պայմանագրով, հավելվածներով նախատեսված և իրեն ներկայացված փաստաթղթերը, կատարել բոլոր վճարումները,

2.2.2. սույն Պայմանագրի շրջանակներում նախատեսված աշխատանքների իրականացման և ծառայությունների մատուցման նպատակով ապահովել Կատարողի աշխատակիցների մուտքը Բաժանորդի տարածք, ինչպես նաև ստեղծել անհրաժեշտ պայմաններ Բաժանորդի տարածքում տեղադրված և կապ ապահովող սարքավորումների կարգավորման համար,

2.2.3. պահպանել համակարգչային ցանցերում գործող ընդհանուր օրինակարգը,

2.2.4. առանց Կատարողի հետ համաձայնեցման չկատարել փոփոխություններ կապի համար տեղադրված սարքավորումների և ծրագրային ապահովման հետ,

2.2.5. բացառել կամ հնարավորինս նվազեցնել իր կողմից կապի անհարկի ծանրաբեռնելու դեպքերը (օրինակ՝ ցանցային կամ համակարգչային վարակիչների տարածում, էլեկտրոնային նամակներով հեղեղում և այլն): Հակառակ դեպքում, ինչպես նաև Բաժանորդի կողմից հակերային գործողությունների (մասնավորապես՝վնասաբեր ծրագրերի

տարածում, չարտոնված մուտքի կամ այն իրականացնելու փորձի արձանագրում) հայտնաբերման դեպքում, որը կարող է վնաս հասցնել Կատարողին կամ երրորդ անձին՝ Կատարողն իրավունք ունի առանց նախազգուշացնելու միակողմանի ձեռնարկել համապատասխան հակազդող բնույթի միջոցառումներ (օրինակ՝ տրաֆիկի որոշ տիպերի թողանցման սահմանափակում), ընդհուպ մինչև բաժանորդի կապի անջատում: Ծառայությունների լիարժեք վերսկսումը իրականացվում է միայն Բաժանորդի սույն կետով նախատեսված պարտավորությունները կատարելուց հետո,

2.2.6. տվյալ օրվա տրաֆիկի ծավալի վերաբերյալ իր անհամաձայնությունը հայտնել Կատարողին այդ օրվա ավարտից սկսած երեք աշխատանքային օրվա ընթացքում, որից հետո կողմերը իրենց տրամադրության տակ գտնվող տվյալների հիման վրա փորձում են ողջամիտ ժամկետներում գալ ընդհանուր եզրակացության: Եթե Բաժանորդն իր անհամաձայնությունը հայտնում է նշված ժամկետից հետո, ապա Կատարողն իրավունք ունի չքննարկել հարցը: Այդ դեպքում, տվյալ օրվան վերաբերվող ծառայությունները համարվում են մատուցված կատարողի և ընդունված Բաժանորդի կողմից:

2.3. Պայմանագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների տեխնիկական, ֆինանսական և այլ հարցերի օպերատիվ քննարկման և լուծման նպատակով կողմերը հայտնում են միմյանց համապատասխան կոնտակտային տեղեկություններ (հեռախոսահամարներ, էլեկտրոնային փոստ և այլն):

2.4. Կողմերը պարտավորվում են միմյանց հնարավորինս արագ տեղյակ պահել ի հայտ եկած անցանկալի երևույթների վերաբերյալ, որոնց առկայությունը խոչընդոտում է սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների լիարժեք մատուցման և ստանալու գործընթացին: Այն կողմը, որը բացահայտել է խոչընդոտը պարտավորվում է համապատասխան միջոցառումների շնորհիվ և հնարավորինս սեղմ ժամկետներում վերացնել այն:

2.5. Կողմերը պարտավորվում են գաղտնի պահել և չտրամադրել երրորդ կողմին միմյանց վերաբերյալ այնպիսի տվյալներ, որոնց օգտագործումը (երրորդ անձի կողմից) կարող է նյութական կամ բարոյական վնաս հասցնել մյուս կողմին: Այդպիսի տվյալներից են կոմերցիոն բնույթի տեղեկություններ, տեխնիկական տվյալներ և լուծումներ, ծածկագրեր և ցանցային այլ ռեկվիզիտներ, տրաֆիկի վերաբերյալ տեղեկություններ: Այդպիսի տվյալներ կարող են տրամադրվել երրորդ կողմին միայն ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

2.6. Բաժանորդի տրաֆիկի թողանցումը իրականացվում է առանց ձևափոխումների և ինտերնետային ծառայությունների սահմանափակման, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ սահմանափակումները պայմանավորված են ծառայությունների բնույթով:

3. Կողմերի պատասխանատվությունը

3.1.Պայմանագրի շրջանակներում կողմերի պատասխանատվությունները կարգավորվում են համաձայն սույն պայմանագրի դրույթների:

3.2. Ծառայությունների ընդհատման համար Կատարողի պատասխանատվությունը բացառապես սահմանափակվում է սույն պայմանագրի 5.3. կետով:

3.3. Կատարողը որևէ պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրի առարկա հանդիսացող ծառայությունների մատուցման ընթացքում, կամ նրանց ընդհատման ժամանակ, որակի և այլ գործողությունների հետևանքով Բաժանորդին ուղղակի կամ անուղղակի հասցված վնասների, այդ թվում բաց թողած օգուտների համար:

3.4. Սույն Պայմանագրի շրջանակներում Կատարողը չի վերահսկում և պատասխանատվություն չի կրում Բաժանորդի կողմից կամ Բաժանորդին ուղարկված տեղեկատվության պարունակության և բովանդակության համար:

3.5. Կատարողը պատասխանատվություն չի կրում Բաժանորդի առաջ իր ազդեցության ոլորտից դուրս գտնվող հանգամանքերի համար, ինչի հետևանքով կարող է խոչընդոտվել Բաժանորդի աշխատանքը: Այդպիսի հանգամանքներից են օրինակ՝ Ինտերնետ ցանցի որոշ հատվածի հետ կապի ցածր որակը կամ կապի բացակայությունը:

4. Լրացուցիչ պայմաններ

4.1. Այն դեպքում, երբ կապը ապահովող սարքավորումները Կատարողի կողմից վարձակալությամբ հանձնվում են Բաժանորդին, կողմերը համապատասխան հավելվածով կամ այլ փաստաթղթով վավերացնում են վերոնշված գործարքի անհրաժեշտ պայմանները:

4.2.Կողմերի համաձայնությամբ Բաժանորդին ծառայություններ կարող են մատուցվել կատարողին պատկանող սարքավորումներով:

4.3. Այն դեպքում, երբ սարքավորումները տեղադրում է Կատարողը, ապա կողմերը համապատասխան հավելվածով կամ այլ փաստաթղթով վավերացնում են սարքերի տեղադրման պայմանները:

5. Վճարումներ, ծառայությունների մատուցման, ընդունման և վճարման կանոնակարգ

5.1. Ծառայությունների դիմաց վճարումները Բաժանորդը կատարում է համաձայն սույն Պայմանագրի և Պայմանագրին կից նրա անբաժանելի մասը հանդիսացող հավելվածում / Հավելվածներում ներկայացված գնացուցակի և կարգի:

5.2.Գնացուցակի փոփոխման դեպքում, Կատարողը պարտավոր է առնվազն մեկ ամիս առաջ այդ մասին տեղյակ պահել Բաժանորդին: Վերջինիս համաձայնության դեպքում բոլոր փոփոխությունները վավերացվում են համապատասխան հավելվածով: Եթե նոր գնացուցակը չի ընդունվում Բաժանորդի կողմից, ապա Կատարողն իրավունք ունի դադարեցնել կամ ժամանակավոր ընդհատել սույն պայմանագիրը:

5.3. Ծառայությունների ընդհատման դեպքերում ամսեկան վճարումների այն մասը, որը կախված չէ տրաֆիկի ծավալից, հետագայում՝ հաստատուն վճարներ (օրինակ՝ բաժանորդային վարձ, վարձավճարներ տրամադրած կապուղիների և /կամ պատվիրած թողունակության համար) կարող են նվազեցվել: Եթե ընդհատումները տեղի են ունեցել տվյալ հանգույցում, ապա վերահաշվարկման ենթակա են միայն տվյալ հանգույցին վերաբերվող հաստատուն վճարները: Եթե կապի ընդհատման ժամանակը տվյալ ամսում (T) չի գերազանցել 24 ժամը, ապա վերահաշվարկ չի կատարվում: Եթե կապի ընդհատման ժամանակը տվյալ ամսում (T) գերազանցում է 24 ժամը, ապա վերահաշվարկ կատարվում է համաձայն հետևյալ բանաձևի

S1=T-(H-24)xT/720, որտեղ. T-սակագին, H-չաշխատած ժամերը

S-վերահաշվարկվող գումարի նոմինալ

S1-վերահաշվարկված գումար:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցություն

6.1. Անհաղթահարելի ուժի հետևանքով իրենց պարտավորությունները մասնակիորեն կամ ամբողջությամբ չկատարելու համար կողմերը պատասխանատվություն չեն կրում:

6.2. Սույն Պայմանագրի շրջանակներում անհաղթահարելի ուժ են համարվում տարերային աղետներ, պատերազմ, զանգվածային անկարգություններ, օրենսդիր մարմնի գործողություններ և կողմերի վերահսկողությունից դուրս նման այլ իրադարձություններ:

7. Պայմանագրի դադարեցման կամ ժամանակավոր ընդհատման պայմանները

7.1. Այն դեպքում, երբ մի կողմը չի կատարում սույն պայմանագրում նշված պարտավորությունները՝ կողմերից յուրաքանչյուրը կարող է ընդհատել պայմանգիրը խախտող կողմին գրավոր նախազգուշացնելուց 10 օր հետո:

7.2. Պայմանագիրը կարող է դադարեցվել կամ ժամանակավոր ընդհատվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

7.3. Պայմանագրի դադարեցման կամ ժամանակավոր ընդատման դեպքերում Բաժանորդը պարտավոր է վճարել մինչև դադարեցման /ընդհատման/ պահը փաստացի մատուցած ծառայությունների արժեքը:

8. Փոփոխություններ

8.1. Պայմանագրում լրացումներ, փոփոխություններ՝ կապված նոր ծառայությունների մատուցման կամ պայմանների փոփոխման հետ, կարող են կատարվել միայն երկկողմանի գրավոր համաձայնությամբ, որոնք կհանդիսանան սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9. Պայմանագրի գործողության ժամկետը

9.1. Սույն Պայմանագիրը ուժի նեջ է մտնում ստորագրման պահից, իսկ Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման սկիզբը կվավերացվի Պայմանագրով նախատեսված աշխատանքերի ավարտից հետո հանձնման-ընդունման ակտով:

9.2. Սույն Պայմանագրի դրույթները տարածվում են կողմերի միջև ս/թ հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2018թ. դեկտեմբերի 28-ը:

9.3. Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրված է մեկական օրինակ:

10. Կողմերի հասցեները բանկային և անձնական վավերապայմանները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Մասիսի քաղաքապետարան	« ԿԻՄ-ՌԱՅ » ՍՊԸ
Ք.Մասիս Կենտրոնական հր. Թիվ 4	Ք. Մասիս նոր թաղամաս 20/2
Հ/Հ 900 432 131 036	Հ/Հ 2472900840910010
ՀՀ ֆինանսների նախարարություն	«Արդշինբանկ» ՓԲԸ Մասիս մ/ճ
ՀՎՀՀ 03801428	ՀՎՀՀ 03810127
----------Դ. Համբարձումյան	---------- Է. Ստեփանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ № 1

Կից № UL 021 ԱՄՄՔ-ՄԱ-ԾՁԲ-18/9 պայմանագրի

Սակագնային Պլան

1. Unlimit - Անսահմանափակ տրաֆիկ՝ սահմանափակ արագությունով

Unlimit- 25000 Ամսեկան 10000 կբիթ/վ արագությամբ

Պայմանագրի գինը կազմում է 300 000 դրամ (երեք հարյուր հազար դրամ)

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Մասիսի քաղաքապետարան	« ԿԻՄ-ՌԱՅ » ՍՊԸ
Ք.Մասիս Կենտրոնական հր. Թիվ 4	Ք. Մասիս նոր թաղամաս 20/2
Հ/Հ 900 432 131 036	Հ/Հ 2472900840910010
ՀՀ ֆինանսների նախարարություն	«Արդշինբանկ» ՓԲԸ Մասիս մ/ճ
ՀՎՀՀ 03801428	ՀՎՀՀ 03810127
----------Դ. Համբարձումյան	---------- Է. Ստեփանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.